



ԳԼԵՆԴԵԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹԱՇՐՋԱՆ

«Նախապատրաստենք մեր աշակերտներին իրենց ապագայի համար»

223 North Jackson St., Glendale, California 91206-4380

Հեռ.՝ 818-241-3111, ներքին հ. 1271 • Ֆաքս՝ 818-546-2101

ԲԻԶՆԵՍ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021-22 ուսումնական տարի

Հարգելի ծնողներ,

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանն ամեն տարի օգնում է ծնողներին ձեռք բերել պատահարների լրացուցիչ ապահովագրություն մեր դպրոցներում սովորող աշակերտների համար: Թեև մենք միշտ ձեր երեխաներին պաշտպանելու քայլեր ենք ձեռնարկում, այնուամենայնիվ ուզում ենք, որ տեղյակ լինեք այս ապահովագրության տարբերակի առկայության մասին:

Այն ծնողներին, ովքեր չունեն առողջապահական ապահովագրություն, խրախուսում ենք մտածել իրենց երեխաների համար պատահարների լրացուցիչ ապահովագրություն ձեռք բերելու մասին: Իսկ այն ծնողներին, ովքեր ունեն առողջապահական ապահովագրություն, որում ընդգրկված են իրենց երեխաները, խորհուրդ ենք տալիս վերանայել այս ապահովագրության առավելությունները և որոշել, թե պատահարների լրացուցիչ ապահովագրությունը որքանով է համապատասխանում իրենց կարիքներին: Սա լրացուցիչ ապահովագրություն է. սկզբում ձեր հիմնական ապահովագրությունը կվճարի բժշկական ծախսերի իր բաժինը, իսկ լրացուցիչ ապահովագրությունը կվճարի՝ մնացած ծախսերի հիման վրա: Խնդրում ենք ժամանակ տրամադրել և ուշադրությամբ կարդալ ու հասկանալ պատահարների լրացուցիչ ապահովագրության առաջարկած նպաստները և այն բացառումներն ու սահմանափակումները, որոնք բացատրված են ներկայացված գրքույկում:

COVID-19 – 2020թ. մարտին դպրոցների ֆիզիկապես փակվելուց հետո այս ծրագրի՝ Մայերգ-Սթիվենս և Թուհի (MST), ղեկավարությունն աշխատել է պատասխանատվություն կրող ապահովագրական ընկերության հետ ապահովագրական ծրագրում մի քանի ճշգրտումներ մտցնելու վրա: Համառոտ՝ դրանք հետևյալն են. 1) ապահովագրության տարածում իրավասու դեպքերի վրա՝ տնային հեռավար ուսման պայմաններում. 2) COVID-19-ի թեստավորման ծախսաձածկում իրավասու դեպքերում. 3) ապահովագրության կողմից վճարվող Հեռաբժշկության ծառայության ավելացում. 4) իրավասու ծախսաձածկման տարածում դասերի վերջին օրվանից հետո տեղափոխված դպրոցական գործունեության վրա. 5) ծախսաձածկման հարաբերական տարածում շրջանավարտ աշակերտների վրա, որոնք մասնակցում են նմանատիպ հետաձգված գործունեություններին և 6) փոփոխված հայցադիմումների ձևեր ու ընթացակարգեր: Մանրամասները կարող եք գտնել MST-ի կայքում՝ www.myers-stevens.com: Այս պահի դրությամբ այս ճշգրտումները շարունակում են տարածվել 2021-2022 ուսումնական տարվա ապահովագրության ծրագրի վրա: Քանի որ COVID-ի հետ կապված իրադրությունը շարունակում է զարգանալ՝ թարմացումները կտեղադրվեն MST-ի կայքում:

Ձեր հարմարության համար ներառում ենք Մայերգ-Սթիվենս ընկերության տեղեկատվությունը: Խնդրում ենք նկատի ունենալ, որ Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը Մայերգ-Սթիվենս ընկերության հետ ֆինանսական կապեր չունի և ոչ մի ֆինանսական շահ չունի դրանից: Ապահովագրությունը ստանալու համար լրացրեք անդամագրվելու դիմումը և վճարի հետ միասին ուղարկեք ուղղակիորեն Մայերգ-Սթիվենս ընկերությանը: Եթե հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել ծրագրի ղեկավարին՝ Մայերգ-Սթիվենսին՝ 800-827-4695 կամ 949-348-0656 հեռախոսահամարներով: Կարևոր է, որ տպեք և ձեզ մոտ պահեք գրքույկը, քանի որ այն տեղեկություններ է պարունակում արտոնությունների նկարագրության և հայցադիմում ներկայացնելու վերաբերյալ:

Հարգանքներով՝

Ստեֆեն Դիկինսոն
Բիզնեսի և ֆինանսների գլխավոր պատասխանատու